ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 8** քաղ. Մոսկվա

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 24-րդ կետի 1-ին ենթակետին («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 1 հավելվածի 46-րդ եւ 50-րդ կետերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց.**

1. «Մաքսային միությունում բույսերի կարանտինի ապահովման մասին» 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի 2016 թվականի փետրվարի 12-ի
թիվ 8 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշման մեջ կատարվող

1. Անվանման մեջ «Մաքսային միությունում» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միությունում» բառերով:

2. 1-ին եւ 3-րդ կետերի տեքստում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով:

3. Նշված Որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկում՝

ա) անվանման մեջ «Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում» բառերով.

բ) աղյուսակի գլխի երկրորդ սյունակում «ՄՄ ԱՏԳ ԱԱ» բառերը փոխարինել «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ» բառերով.

գ) I բաժնում՝

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0106 41 000 եւ 0106 49 000 ծածկագրերով դիրքում «0106 41 000-ից, 0106 49 000-ից» բառերը փոխարինել «0106 41 000 8-ից, 0106 49 000 1-ից» բառերով.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1212 94 000 0 եւ 1212 99 950 0 ծածկագրերով դիրքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Ծիրանի, դեղձի (այդ թվում՝ նեկտարինի) կամ սալորի 1212 94 000 0-ից, կորիզներ եւ դրանց միջուկները՝ չբոված. Cichorium intybus 1212 99 950 0-ից». sativum տեսակի եղերդի արմատներ

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2530 90 000 9 ծածկագրով դիրքը երկրորդ սյունակում լրացնել «, 3824 90 970 8-ից» բառերով.

դ) II բաժնում՝

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2309 90 950 0 ծածկագրով դիրքը երկրորդ սյունակում լրացնել «, 2309 90 990 0-ից» բառերով.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3203 00 ծածկագրով դիրքում «3203 00-ից» բառերը փոխարինել «3203 00 100 9-ից» բառերով.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4101, 4102 եւ 4103 ծածկագրերով դիրքի առաջին սյունակում «Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 41-րդ խմբի 1բ կամ 1գ» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի 41-րդ խմբի 1բ կամ 1գ» բառերով.

ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4408 ծածկագրով դիրքի առաջին սյունակի տեքստը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Երեսապատման թերթեր (ներառյալ շերտավոր փայտանյութի մասնատումից ստացված թերթերը)՝ սոսնձած նրբատախտակի կամ նույնանման շերտավոր փայտանյութի համար, եւ այլ անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղեւահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ

մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ոչ ավելի հաստությամբ, բացի ներկով, ախտահանիչներով, հականեխիչով եւ այլ կոնսերվանտներով մշակվածներից».

ե) ծանոթագրության տեքստում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

զ) տողատակի առաջին ծանոթագրության մեջ «ՄՄ ԱՏԳ ԱԱ» բառերը փոխարինել «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ» բառերով։

4. Նշված Որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային սահմանին կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին» հիմնադրույթում՝

ա) անվանման մեջ «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

բ) տեքստի մեջ համապատասխան թվով եւ հոլովով «Կողմ» բառը փոխարինել համապատասխան թվով եւ հոլովով «անդամ պետություն» բառերով, համապատասխան հոլովով «կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)» բառերը փոխարինել համապատասխան հոլովով «կարանտինային օբյեկտներ» բառերով.

գ) 1.1 կետը ուժը կորցրած ճանաչել.

դ) 1.2 կետում, 1.3 կետում, 1.4 կետում, 2.2 կետի երկրորդ պարբերության մեջ, 3.1 կետում, 3.9 կետում, 4.1.6 կետի 2-րդ ենթակետի չորրորդ պարբերության մեջ, 7.1 կետի 1-ին եւ 3-րդ ենթակետերում, 7.3 կետում, VIII բաժնի անվանման մեջ, 8.2 կետի առաջին պարբերության մեջ եւ 8.3 կետում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

ե) 1.2 կետի 1-ին ենթակետում «Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատված՝ Մաքսային միության մաքսային սահմանին եւ Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության

(վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկ (այսուհետ՝ Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկ)» բառերը փոխարինել «Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկ (այսուհետ՝ համապատասխանաբար կարանտինային հսկողության վերցված արտադրանք, Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկ)» բառերով.

զ) 1.4 կետում «Կողմերի լիազորված մարմինները» բառերը փոխարինել «բույսերի կարանտինի հարցերով լիազորված մարմինները (այսուհետ՝ լիազորված մարմիններ)» բառերով.

է) II բաժնի անվանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«II. Սահմանումները».

ը) 2.1 կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2.1. Սույն Հիմնադրույթի նպատակներով օգտագործվում են հետեւյալ հասկացությունները՝

«ներմուծում»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ներմուծում.

«վերադարձ»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից լիազորված մարմնի պաշտոնատար անձի հանձնարարագրով կարանտինային հսկողության վերցված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող արտադրանքի արտահանում.

«արտահանում»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի արտահանում.

«վարակվածություն (ախտահարություն)»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային օբյեկտների առկայություն.

«կարանտինային օբյեկտներ»՝ անդամ պետությունների տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող եւ անդամ պետությունների կարանտինային օբյեկտների ցանկում ներառված վնասակար օրգանիզմներ.

«կարանտինային բուսասանիտարական պահանջներ»՝ անդամ պետությունների միջազգային պարտավորություններին եւ դրանց օրենսդրությանը համապատասխան՝ բույսերի կարանտինի ապահովման նպատակով սահմանված պահանջներ, որոնք ներկայացվում են համապատասխան անդամ պետության տարածք ներմուծվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակին, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փաթեթվածքին եւ այդ փաթեթվածքի մակնշմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փոխադրման միջոցներին, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք դրանց ժամանման հավանական վայրի եւ առաքման վայրի նշմանը, ինչպես նաեւ մինչեւ դրա ներմուծումը կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կանխարգելիչ վարակազերծման միջոցառումների իրականացմանը.

«կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)՝ ներմուծման դեպքում»՝ լիազորված մարմինների գործունեություն, որն ուղղված է կարանտինային օբյեկտների հայտնաբերմանը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական վիճակի հաստատմանը, բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորությունների կատարմանը եւ անդամ պետությունների օրենսդրության պահպանմանը.

«առաքման վայր»՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքին (Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին՝ այն ուժի մեջ

մտնելուց հետո) համապատասխան սահմանվող վայր, որտեղ ուղարկվում է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը.

«մաքսային ձեւակերպումների ավարտման վայր»՝ մաքսային մարմինների կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բացթողման վայր՝ հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան՝ բացառությամբ «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի.

«ժամանման վայր»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ժամանման վայր, որը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքին (Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո) համապատասխան.

«մեկնման վայր»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի մեկնման վայր, որը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքին (Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո) համապատասխան.

«վարակազերծում»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ համալիր գործողություններ, որոնք ուղղված են կարանտինային օբյեկտների ոչնչացմանը.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողին ուղարկելու համար.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տեղափոխում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ներմուծում

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի արտահանում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկում ներառված բույսեր, բուսական ծագման արտադրանք, բեռներ, հող, օրգանիզմներ, նյութեր, տարա, փաթեթվածք, որոնք տեղափոխվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ու Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով, կարող են լինել կարանտինային օբյեկտների կրողներ եւ (կամ) նպաստել դրանց տարածմանը, եւ որոնց նկատմամբ անհրաժեշտ է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ.

«բուսասանիտարական բարձր ռիսկայնություն ունեցող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական բարձր ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին.

«բուսասանիտարական ցածր ռիսկայնություն ունեցող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական ցածր ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին.

«արտադրանքի սեփականատեր»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատեր կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատիրոջ անունից Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով արտադրանքի տեղափոխման հետ կապված գործարքներ եւ (կամ) այլ գործողություններ իրականացնելու համար լիազորված այլ անձ.

«տրանսպորտային միջոցներ»՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին (Եվրասիական տնտեսական միության մաքսային

օրենսգրքին՝ դրա ուժի մեջ մտնելուց հետո) համապատասխան սահմանվող տրանսպորտային միջոցներ, որոնք օգտագործվում են կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխելու համար.

«բուսասանիտարական հսկիչ կետ»՝ բույսերի կարանտինի համար նախատեսված կետ, որն ստեղծվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում եւ այլ վայրերում՝ հաշվի առնելով դրանց նյութատեխնիկական հագեցվածությանն ու սարքավորվածությանը ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող պահանջները.

«բուսասանիտարական սերտիֆիկատ»՝ միջազգային նմուշի փաստաթուղթ, որն ուղեկցում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքը եւ տրվում է արտահանող (վերաարտահանող) երկրի լիազորված մարմնի կողմից՝ 1951 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված ձեւի համաձայն, եւ որով հավաստվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի համապատասխանությունը ներկրող երկրի բուսասանիտարական պահանջներին.

«փորձագիտական կազմակերպություն»՝ կազմակերպություն, որը մտնում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) ընտրանքի տեղանքից դուրս լաբորատոր հսկողության մեթոդների օգտագործմամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նմուշների (փորձանմուշների) կարանտինային բուսասանիտարական վիճակի հետազոտման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ եւ տեխնիկական միջոցների հագեցվածություն ունեցող լիազորված մարմնի կառուցվածքի մեջ։».

թ) 2.2 կետում՝

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]

երկրորդ պարբերության մեջ «եւ Եվրասիական տնտեսական համայնքի» բառերը հանել, «Կոնվենցիայով» բառը փոխարինել «1951 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով» բառերով.

ժ) 3.3 կետում՝

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]

երկրորդ պարբերության մեջ «Եվրասիական տնտեսական համայնքի՝ տեխնիկական կարգավորման, սանիտարական եւ բուսասանիտարական միջոցառումների ոլորտի տեղեկատվական համակարգում ու Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության ինտեգրված տեղեկատվական համակարգում» բառերով.

ժա) [*փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]*

ժբ) 3.9 կետում [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին], «Կարանտինային օբյեկտների ազգային ցանկերում» բառերը փոխարինել «անդամ պետությունների կարանտինային օբյեկտների ցանկերում» բառերով.

ժգ) *[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]*

ժդ) 4.1.9 կետում եւ 4.2.4 կետի 1-ին ենթակետում «կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատիրոջ» բառերը փոխարինել «արտադրանքի սեփականատիրոջ» բառերով.

ժե) 8.1 կետի առաջին պարբերության մեջ «տվյալ» բառը փոխարինել «այդ» բառով:

ժզ) *[փոփոխությունները վերաբերում են միայն ռուսերենին]*

ժէ) 9.1 կետում «Մաքսային միության անդամ պետությունների» բառերը հանել.

ժը) նշված Հիմնադրույթի 1-ին հավելվածում՝

համարակալված վերնագրում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

դրոշմակնիքների կիրառման ցուցումներում՝

տեքստի մեջ «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

չորրորդ պարբերության մեջ «BY, KZ, RU» պայմանական նշագրերը փոխարինել «AM, BY, KZ, KG, RU» պայմանական նշագրերով.

դրոշմակնիքների կիրառման ցուցումներից հետո աղյուսակը հանել.

ժթ) նշված Հիմնադրույթի 2-րդ հավելվածի համարակալված վերնագրում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով:

5. Նշված Որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգի մասին» հիմնադրույթում՝

ա) անվանման մեջ «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

բ) տեքստում՝

«Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

համապատասխան թվով եւ հոլովով «Կողմ» բառը փոխարինել համապատասխան թվով եւ հոլովով «անդամ պետություն» բառերով.

համապատասխան հոլովով «կարանտինային օբյեկտներ (կարանտինային վնասակար օրգանիզմներ)» բառերը փոխարինել համապատասխան հոլովով «կարանտինային օբյեկտներ» բառերով.

«Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առեւտրի» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

գ) 1.1 կետը ուժը կորցրած ճանաչել.

դ) 1.2 կետում՝

առաջին պարբերությունը «այն դեպքերում, երբ» բառերից առաջ լրացնել «Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318 որոշմամբ հաստատված՝ Հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) ցանկում ընդգրկված՝ Եվրասիական տնտեսական միության սահմանին եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում կարանտինային բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (կարանտինային հսկողության վերցված բեռների, կարանտինային հսկողության վերցված նյութերի, կարանտինային հսկողության վերցված ապրանքների) (այսուհետ՝ համապատասխանաբար հսկողության վերցված արտադրանք, Հսկողության վերցված արտադրանքի ցանկ)».

[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]

ե) 1.4 կետում «Կողմերի լիազորված մարմինները» բառերը փոխարինել «բույսերի կարանտինի հարցերով լիազորված մարմինները (այսուհետ՝ լիազորված մարմիններ)» բառերով.

զ) II բաժնի անվանումը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«II. Սահմանումները».

է) 2.1 կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«2.1. Սույն Հիմնադրույթի նպատակներով կիրառվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«նշանակման վայրի երկիր»՝ անդամ պետություն, որի տարածքում տեղակայված է նշանակման վայրը.

«ուղարկման վայրի երկիր»՝ անդամ պետություն, որի տարածքում տեղակայված է ուղարկման վայրը.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի զննում»՝ լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի այն խմբաքանակի ակնադիտական հետազոտում, որն ամբողջությամբ բեռնաթափված է տրանսպորտային միջոցից կամ տրանսպորտային միջոցում տեղադրված է այնպես, որ լիազորված մարմնի պաշտոնատար անձը հնարավորություն ունենա հետազոտելու կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի ցանկացած հատված եւ կարողանա իրականացնել կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից նմուշներ (փորձանմուշներ) վերցնելը, անցկացնել կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տարբեր մասերից նմուշներ (փորձանմուշներ) վերցնելը եւ վերցված նմուշները (փորձանմուշները) հետազոտելը.

«վարակվածություն (ախտահարություն)»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքում կարանտինային օբյեկտների առկայություն.

«կարանտինային բուսասանիտարական գոտի»՝ տարածք, որտեղ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարված է կարանտին՝ պայմանավորված կարանտինային օբյեկտի հայտնաբերմամբ.

«կարանտինային օբյեկտներ»՝ անդամ պետությունների տարածքներում բացակայող կամ սահմանափակ տարածում ունեցող եւ անդամ պետությունների կարանտինային օբյեկտների ցանկում ներառված վնասակար օրգանիզմներ.

«կարանտինային բուսասանիտարական պահանջներ»՝ անդամ պետությունների միջազգային պարտավորություններին եւ օրենսդրությանը համապատասխան՝ բույսերի կարանտինի ապահովման նպատակով սահմանված պահանջներ, որոնք ներկայացվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով տեղափոխվող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի բուսասանիտարական վիճակին, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի փաթեթվածքին, դրա փոխադրման միջոցներին, նշանակման հավանական վայրի նշմանը, ինչպես նաեւ կարանտինային

հսկողության վերցված արտադրանքի կանխարգելիչ վարակազերծման միջոցառումների իրականացմանը.

«կարանտինային բուսասանիտարական հսկողություն (վերահսկողություն)»՝ լիազորված մարմինների գործունեություն, որն ուղղված է կարանտինային օբյեկտների հայտնաբերմանը, կարանտինային հսկողության վերցված արտադրանքի կարանտինային բուսասանիտարական վիճակի հաստատմանը, բույսերի կարանտինի ոլորտում միջազգային պարտավորությունների կատարմանն ու անդամ պետությունների օրենսդրության պահպանմանը.

«նշանակման վայր»՝ վայր, որտեղ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը բեռնաթափվում է այն տրանսպորտային միջոցից, որով այն տեղափոխվել է, կամ փոխաբեռնվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի մեջ.

«ուղարկման վայր»՝ վայր, որտեղ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակը բեռնվել է տրանսպորտային միջոցի մեջ.

«վարակազերծում»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի նկատմամբ համալիր գործողություններ, որոնք ուղղված են կարանտինային օբյեկտների ոչնչացմանը.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի եւ տրանսպորտային միջոցների տեսազննում»՝ լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից կարանտինային հսկողության վերցված արտադրանքի (առանց տարան ու փաթեթվածքը բացելու), տրանսպորտային միջոցների եւ փոխադրման հարմարանքների (այդ թվում՝ տրանսպորտային միջոցների խցիկների, սրահների, բեռնախցիկի եւ ուղեբեռային հատվածների, կոնտեյներների) ակնադիտական հետազոտում.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի քանակ, որը նախատեսված է մեկ տրանսպորտային միջոցով մեկ նշանակման կետ մեկ ստացողին ուղարկելու համար.

«կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկում ներառված բույսեր, բուսական ծագման արտադրանք, բեռներ, հող, օրգանիզմներ, նյութեր, տարա, փաթեթվածք, որոնք տեղափոխվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով ու Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով, կարող են լինել կարանտինային օբյեկտների կրողներ եւ (կամ) նպաստել դրանց տարածմանը, եւ որոնց նկատմամբ անհրաժեշտ է ձեռնարկել կարանտինային բուսասանիտարական միջոցառումներ.

«բուսասանիտարական բարձր ռիսկայնություն ունեցող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական բարձր ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին.

«բուսասանիտարական ցածր ռիսկայնություն ունեցող՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանք, որը, Կարանտինային հսկողության վերցված արտադրանքի ցանկին համապատասխան, դասվում է բուսասանիտարական ցածր ռիսկայնությամբ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի շարքին.

«արտադրանքի սեփականատեր»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատեր կամ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի սեփականատիրոջ անունից ուղարկման վայրից նշանակման վայր արտադրանքի տեղափոխման հետ կապված գործարքներ եւ (կամ) այլ գործողություններ իրականացնելու համար լիազորված այլ անձ.

«տրանսպորտային միջոցներ»՝ կարանտինային հսկողության վերցված արտադրանքի խմբաքանակի տեղափոխման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներ.

«տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր»՝ կոնոսամենտ, բեռնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնցով պետք է ուղեկցվի բեռը փոխադրման ընթացքում՝ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

«բուսասանիտարական սերտիֆիկատ»՝ միջազգային նմուշի փաստաթուղթ, որն ուղեկցում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքը եւ տրվում է արտահանող (վերաարտահանող) երկրի լիազորված մարմնի կողմից՝ 1951 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով սահմանված ձեւի համաձայն, եւ որով հավաստվում է կարանտինային հսկողության վերցված արտադրանքի համապատասխանությունը ներկրող երկրի բուսասանիտարական պահանջներին:».

ը) 2.2 կետում «Կոնվենցիայով» բառը փոխարինել «1951 թվականի դեկտեմբերի 6-ի՝ Բույսերի կարանտինի եւ պաշտպանության միջազգային կոնվենցիայով» բառերով.

թ) *[փոփոխությունները վերաբերում են միայն ռուսերենին]*

ժ) *[փոփոխությունները վերաբերում են միայն ռուսերենին]*

ժա) *[փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին]*

ժբ) 3.21 կետում «Համաձայնագրի» բառը հանել, [փոփոխությունը վերաբերում է միայն ռուսերենին].

ժգ) նշված Հիմնադրույթի թիվ 1 հավելվածի համարակալված վերնագրում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

ժդ) նշված Հիմնադրույթի թիվ 2 հավելվածում՝ համարակալված վերնագրում «Մաքսային միության» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության» բառերով.

դրոշմակնիքների կիրառման ցուցումներում «Մաքսային միության անդամ պետությունների պայմանական նշագրերը (BY, KZ, RU)» բառերը փոխարինել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պայմանական նշագրերը (AM, BY, KZ, KG, RU)» բառերով: